Գրախոսություն

Israel Charny, *Israel's Failed Response to the Armenian Genocide: Denial, State Deception, Truth versus Politicization of History* [Իսրայելի ձախողված արձագանքը Հայոց ցեղասպանությանը. ժխտողականություն, պետական խաբեություն, ճշմարտություն ընդդեմ պատմության քաղաքականացման], Boston, Academic Studies Press, 267 pp.:

Հայաստան Ա. Մարտիրոսյան
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ հիմնադրամ, Հայաստան

Այսօր, երբ դեռ շարունակվում են իրագործվել ցեղասպանություններ աշխարհի տարբեր անկյուններում, Իսրայել Զառնիի գրախոսվող աշխատանքն իրապես մեծ ներդրում է ցեղասպանությունների ժխտողականության ներկայացման, առավելապես, Հայոց ցեղասպանության նկատմամբ Իսրայել պետության որդեգրած քաղաքականության մասին, որի հիմքում ընկած են մի կողմից պետության տնտեսական և քաղաքական շահերը՝ զուգահեռվելով մարդկության ամենամեծ աղետի ընդունման և դատապարտման հետ, մյուս կողմից՝ Հոլոքոստի եզակիությունն այլ ցեղասպանությունների հետ համեմատության համատեքստում: Աշխատանքում ներկայացվում են, թե ինչպես ցեղասպանություն վերապրած ազգի պետական այրերը կարող են հեշտորեն մերժել և ժխտել նույն ողբերգության միջով անցած այլ ժողովուրդների ցեղասպանությունները:

Աշխատության հիմնական թեման 1982 թ. հունիսին Թել Ավիվում ցեղասպանագետ Իսրայել Զառնիի կազմակերպած «Հոլոքոստի և Ցեղասպանության առաջին միջազգային գիտաժողովն» է, որին պետք է մասնակցեին նաև հայ ցեղասպանագետներ՝ ներկայացնելով զեկույցներ Հայոց ցեղասպանության մասին: Իսրայելը, հաշվի առնելով Թուրքիայի ճնշումները՝ թույլ չտալու հայազգի հետազոտողների մասնակցությունն այդ գիտաժողովին, սկսում է տարբեր ուղիներով հասնել նրան, որպեսզի գիտաժողովն առհասարակ չեղարկվի: Իսրայելն այս ամենին հասնելու համար մեջտեղ է բերում վարկած՝ իբրև գիտաժողովի անցկացման պարագայում Թուրքիան կարող է փակել այն ուղիները, որով անցնում են Իրանից և Սիրիայից փախչող հրեաները, ինչը կվտանգի վերջիններիս կյանքը: Կայանալիք գիտաժողովը պետք է նախագահեր գրող, Հոլոքոստը վերապրած, Նոբելյան խաղաղության մրցանակակիր Էլի Վիզելը (1928-2016): Գրքի հեղինակ և գիտաժողովի կազմակերպիչ պրոֆ. Իսրայել Զառնին հայտնվում է ծանր դրության մեջ. նա պետք է հաշվի նստեր «Իրանը և Սիրիան լքող հրեաների անվտանգության հետ»:

Պրոֆ. Զառնիի կողմից ձեռնարկվում են անհրաժեշտ քայլեր. նա կապ է հաստատում ԱՄՆ պետքարտուղարության հետ՝ ճշտելու այդ հարցի ճշգրիտ կամ թյուր լինելը: Պետքարտուղարությունից տեղեկատվությունը ստանալուց հետո, պարզ է դառնում, որ իրականում որևէ վտանգ չի սպառնում հրեաներին: Պրոֆ. Զառնին

որոշում է կայացնում, որ գիտաժողովը պետք է տեղի ունենա: Տարիներ անց, երբ բացվում են Իսրայելի արտաքին գործերի նախարարության որոշ արխիվներ, ի հայտ է գալիս նաև Թուրքիայում Իսրայելի գլխավոր հյուպատոսի նամակագրությունը Իսրայելի արտաքին գործերի նախարարության հետ (նամակն ուղարկվել էր գիտաժողովի առաջին օրը՝ 1989 թ. հունիսի 17-ին), որից պարզ է դառնում, որ հրեաների անվտանգության մասին լուրը հորինված էր՝ չեղարկելու գիտաժողովը և չվատթարացնելու իսրայելա-թուրքական հարաբերությունները: Իսրայելի կողմից գիտաժողովի չեղարկման ջանքերն այնքան լուրջ էին, որ միջազգային ամսագրերն անգամ սկսում են գրել, որ գիտաժողովը չեղարկվել է, չնայած այն հանգամանքին, որ գիտաժողովն իրականում կայացավ և անցկացվեց բարձր մակարդակով:

Աշխատանքում առանցքային է Էլի Վիզելի կերպարը, որը համաձայնել էր նախագահել վերոնշյալ գիտաժողովը, սակայն Իսրայել պետության՝ գիտաժողովի նկատմամբ բացասական վերաբերմունքից հետո և ազդվելով հրեաների անվտանգության մասին թեզից՝ հետ է կանգնում գիտաժողովի կազմակերպման մտքից: Վիզելը հրաժարվում է գիտաժողովին տրամադրել այն գումարը, որը խոստացել էր, իսկ դրա հետ մեկտեղ փորձում է նաև կասեցնել հովանավոր այլ կառույցների հնարավոր ֆինանսական օժանդակությունը: Հետաքրքրական են այստեղ պրոֆ. Զառնիի և Էլի Վիզելի հարաբերությունները, որոնք, լինելով լավագույն ընկերներ, գիտաժողովի կազմակերպման հետ կապված տարաձայնությունների պատճառով որոշ ժամանակ խզում են իրենց հարաբերությունները:

Գրքում նաև ներկայացված են պրոֆ. Զառնիի այն նամակները, որոնք ուղարկվել են Իսրայելում բարձր պաշտոններ զբաղեցրած (վարչապետ, արտաքին գործերի նախարար, Քնեսեթի անդամ) Շիմոն Պերեսին՝ 2001, 2002 և 2004 թվականներին, որոնք կոչ և հորդոր էին՝ ճանաչելու և դատապարտելու Հայոց ցեղասպանությունը Իսրայելի կողմից: Հատկանշական է, որ Շիմոն Պերեսին ուղղված նամակներում առկա էր նաև Էլի Վիզելի ստորագրությունն այն 126 գիտնականների ցանկում, որոնք իրենց ստորագրությամբ հաստատում էին Հայոց ցեղասպանության փաստը և կոչ անում Իսրայել պետությանը ճանաչել իրողությունը:

Ըստ հեղինակի՝ Իսրայել պետության համար խիստ կարևոր են հարաբերությունները Թուրքիայի հետ, ինչպես նաև ոչ պակաս կարևոր է այն հանգամանքը, որ Իսրայելի համար որևէ այլ ցեղասպանություն չի կարող համեմատվել հրեաների Շոայի հետ: Հեղինակը հետաքրքիր համեմատություն է անցկացնում ցեղասպանությունների վերապրածների միջև. այսպես՝ ցեղասպանության յուրաքանչյուր վերապրած փորձում է իր ցեղասպանությունը ներկայացնել որպես ամենացավալին և աղետալին (անգլ. victims superiority), որին չեն բախվել այլ ժողովուրդները: Նաև, և՛ ոճրագործը, և՛ զոհը ձգտում են գերակայության (անգլ. superiority). առաջինը՝ հասնելու գերիշխանության՝ զոհի ոչնչացման միջոցով, երկրորդը՝ անկրելի ցավ ստացած լինելու հանգամանքով պայմանավորված:

Գրքում Հայոց ցեղասպանության ժխտողականության համատեքստում ներկայացված են նաև հենց Իսրայելի կողմից կազմակերպված վայրագությունները, որի մասին ներկայացնում է հենց ազգությամբ հրեա գիտնականը, և թե ինչպիսի՛ վե-

բաբերմունք ունի ցեղասպանության վերաբերյալ նախկինում դրա միջով անցած հրեա ժողովուրդը: Խոսքը վերաբերում է Իսրայելի կողմից 1956 թ. իրականացված ցեղասպանական գործողություններին Քֆար Քասսեմում ընդդեմ 49 արաբ կանանց, տղամարդկանց և երեխաների, որի վերաբերյալ հետագայում հրեա անձանց հետ հարցազրույցները ցույց են տալիս, որ պատասխանողների 62%-ը չի արդարացնում իսրայելցի զինվորների կողմից իրականացված ջարդերը Քֆար Քասսեմում, մինչդեռ 38%-ն արդարացնում է զինվորների արարքը:

Գրքում տեղ է հատկացված նաև այլ ցեղասպանությունների ժխտողականությանը, մասնավորապես, Իրաքի եզդիների: 2018 թ. Քնեսեթի անդամներից 58-ը մերժեց ընդունելու եզդիների ցեղասպանության մասին բանաձևը, իսկ Իսրայելի փոխարտգործնախարարը հայտնեց, որ կառավարությունը չի կարող ճանաչել ցեղասպանությունը, քանի դեռ այն ՄԱԿ-ի կողմից չի հաստատվել:

Աշխատանքում անդրադարձ է կատարվում նաև Իսրայելի կողմից ցեղասպանություն կամ ցեղասպանական քարոզչություն իրականացնող պետություններին զենք մատակարարելու հարցին, որոնց թվում նաև Ադրբեջանն է, որի արդյունքը տեսանելի եղավ 2020 թ. Ղարաբաղյան պատերազմում, երբ իսրայելական զենքերը որոշիչ դարձան հայերի պարտության համար:

Գրքում առկա է նաև հեղինակի անդրադարձը Իսրայելի ներքին քաղաքականության որոշ հարցերին: Այսպես, օրըստօրե Իսրայելն արգելում է այն գրողների, մտավորականների և դիվանագետների մուտքը երկիր, որոնք որևէ կերպ ընդդիմանում են Իսրայելի քաղաքականությանը: Իսրայելի «ազգ-պետություն» խնդրին վերաբերող օրենքում ընդգծվում է հրեական ինքնությունը, նվազագույնի է հասցված բազմակարծությունը: Բացի այդ, Իսրայելի կառավարությունն օրենք է ընդունել, որով կառավարության պաշտոնական լեզուների ցանկից հանվել է արաբերենը, թողնելով միայն եբրայերենն ու անգլերենը: Շատ հրեաներ Իսրայելի այս քաղաքականությունը բացատրում են որպես աշխարհում ներկայումս ընդլայնվող հակասեմականությանը դիմագրավելու միջոց: Բացի այդ, հեղինակը մեջբերում է թղթակից Հագար Շեզաֆի 2019 թ. հուլիսի 5-ի բացահայտումն առ այն, որ Իսրայելի կառավարությունը պարբերաբար հեռացրել է պատմական փաստաթղթերի հասանելիությունը, որոնք առնչվում են 1948 թ. Անկախության պատերազմի ընթացքում Իսրայելի կողմից կատարված ցեղասպանական տեղահանություններին և Պաղեստինի արաբ բնակիչների սպանություններին: Այսպիսով, կարող ենք նշել, որ Իսրայելի պետական արխիվները լիարժեք կերպով բաց չեն հետազոտողների համար, քանի որ բաց լինելու պարագայում, որոշ բացահայտումներ կարող են ցավոտ լինել Իսրայել պետության համար՝ կապված արաբա-իսրայելական պատերազմների որոշ դրվագների հետ:

Աշխատանքին բովանդակային առավելություն են տալիս նաև որպես լրացուցիչ ենթագլուխներ դրված՝ թուրք, հայ և հրեա հետազոտողների գլուխները: Մասնավորապես, ազգությամբ թուրք լրագրող և հրատարակիչ Ռագըփ Զարաքօլուի աշխատանքում ներկայացվում է Թուրքիայի կողմից իրականացվող բռնությունների քաղաքականությունը երկրի ներսում այն անձանց նկատմամբ, որոնք որևէ կերպ

ընդդիմանում են Թուրքիայի քաղաքականությանը: Մանրամասն ներկայացվում է Ռագըփ Զարաքօլուի գործունեությունը, ով իր ընտանիքի հետ միասին դաժան վերաբերմունքի է արժանացել, բանտարկվել է, կորցրել է կնոջը (քաղցկեղից մահացել է բանտում): Եվ այս ամենի պատճառը միայն այն է, որ Զարաքօլուն Թուրքիայում պայքարել է հանուն մարդու իրավունքների, բարձրաձայնել է հայերի, հույների, ասորիների ցեղասպանության վերաբերյալ, կնոջ հետ թարգմանել և հրատարակել գրքեր դրանց մասին: Իսկ Թուրքիայում նա միակը չէ, որ գտնվում է հետապնդման մեջ: Ինչպես նշվում է «Լրագրողների պաշտպանության կոմիտե»-ի հաշվետվություններից մեկում՝ «In Turkey reporting is a daily struggle - Թուրքիայում լրագրություն անելն ամենօրյա պայքար է»:

Կարևոր են նաև առանձին ենթագլխով ներկայացված հայազգի գիտնական Ռիչարդ Հովհաննիսյանի կողմից արված համեմատությունները Հոլոքոստի և Հայոց ցեղասպանության միջև և, առհասարակ, ժխտողականության վերաբերյալ, ինչպես նաև հրեա գիտնական Մայքլ Բերենբաումի կողմից ներկայացված պատմությունները՝ կապված Հայոց ցեղասպանության և ԱՄՆ-ի Հոլոքոստի հուշային թանգարանի հիմնադրման հետ:

Իսրայել պետության կողմից Հայոց ցեղասպանության չճանաչմանն է նվիրված գրքի վերջին գլուխը, հատկապես, Իսրայելի նախկին նախագահ Ռյուվեն Ռիվլինին վերաբերող հատվածները, որը նախքան նախագահ դառնալը եղել է Հայոց ցեղասպանության ճանաչման ջատագովներից մեկը: Վերջինս նախագահ դառնալուց հետո հայերի հետ տեղի ունեցածի մասին խոսելիս իր ելույթներում «ցեղասպանություն» եզրույթն օգտագործել է միայն դիվանագիտական բառախաղի տեսքով: Այս գլխից պարզ է դառնում, որ 1980-ական թվականներից մինչ այսօր շարունակվում է Իսրայել պետության որդեգրած քաղաքականությունը Հայոց ցեղասպանության չընդունման և չդատապարտման ուղղությամբ, մինչդեռ արդարության վերականգնման համար հրեա ցեղասպանագետ պրոֆ. Զառնին շարունակում է ներդնել ամեն ջանք: Կարևոր են պրոֆ. Զառնիի և Ցահիր Օրոնի համատեղ հոդվածը՝ տպված 2020 թ. հունվարի 9-ին California Courier-ում, որտեղ մեկ անգամ ևս գիտնականները դատապարտում են Իսրայելի Քնեսեթի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձևերի պարբերաբար տապալումը, հատկապես, երբ ԱՄՆ Սենատն ու Ներկայացուցիչների պալատն անգամ քաջություն ունեցան հաղթահարելու ԱՄՆ վարչակազմից եկող՝ Թուրքիային չհիասթափեցնելու հրամանները և հաջողելու այս հարցում: Իսրայելը ձախողել է ոչ միայն նախկին, այլև ներկայումս ընթացող ցեղասպանությունների ճանաչումն ու դատապարտումը. դրանց թվում են եզդիներինը, ռոհինգյա համայնքինը Մյանմարում, ույղուրներինը՝ Չինաստանում, քրիստոնյաներինը՝ Սիրիայում և այլն: Աշխատանքից պարզ է դառնում, որ մեծ է նաև Երուսաղեմի Հոլոքոստի և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի դերը վերջին տասնամյակներում՝ համեմատական ցեղասպանագիտության ոլորտում: Վերջինս, ըստ նրա, չնայած աշխատակիցների փոքրաթիվ լինելուն, հետազոտական մեծ աշխատանքներ է տանում այս ուղղությամբ:

Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը հեղինակը

դիտարկում է նաև իսրայելա-ադրբեջանական ամուր հարաբերությունների համատեքստում: